**Նուրին, Նուրին**

Նուրին, Նուրին էկել է,
Շալե շապիկ հագել է,
Կարմիր գոտիկ կապել է,
Երկնքեն թոն զուզե,
Գետնեն էլ բերք զուզե:

**Բուկլե բարան**

Բուկլե բարան անձրև բեր,
Բարանկե խարս, անձրև բեր,
Անձրև ի գա, դաշտեր ջերով լեցուցի: - 2 անգամ

Բուկլե բարան անձրև բեր,
Բարանկե խարս, անձրև բեր,
Արտեր ծլին, կանաչ ծիլը քու բաժին: - 2 անգամ

Բուկլե բարան անձրև բեր,
Անձրևի խարս, անձրև բեր,
Արտեր հասնին, տռուզ խատեր քու բաժին: - 2 անգամ

Բուկլե բարան անձրև բեր,
Անձրևի խարս, անձրև բեր,
Տռուզ խատեր ալուր դառնա քու բաժին: - 2 անգամ

Բուկլե բարան անձրև բեր,
Անձրևի խարս, անձրև բեր,
Ալուր շաղինք, լավաշ դառնա քու բաժին: - 2 անգամ

**Պուպլատիկինն էկեր է**

Պուպլատիկինն էկեր է, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՜յ աման,

Շալե շապիկ հագեր է, ու՜յ աման,
Կարմիր գոտի կապեր է, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՜յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՜յ աման:

- Պուպլատիկինն ի՞նչ կուզե:

- Կարմիր կովու եղ կուզեմ, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Սև հավու հավկիթ կուզեմ, ու՜յ աման,
Սև հավու հավկիթ կուզեմ, ու՜յ աման:
Մեծ պտկեն բլղուր կուզեմ, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Ճերմակ ծովուն ջուր կուզեմ, ու՜յ աման,
Ճերմակ ծովուն ջուր կուզեմ, ու՜յ աման:

- Յեղ բերեք, պորտին քսեք, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Ձու բերեք, թաթին դնենք, ու՜յ աման,
Ձու բերեք, թաթին դնենք, ու՜յ աման,
Փարչեր դրեք մեջ ջրին, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Ջուր բերեք՝ լցնենք գլխին, ու՜յ աման,
Ջուր բերեք՝ լցնենք գլխին, ու՜յ աման:

- Անձրև, անձրև, գոլ էրա,
Ցորեն հացը բոլ էրա:

Պուպլատիկինն էկեր է, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՜յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՜յ աման,
Կարմիր գոտի կապեր է, ու՜յ, ու՜յ, ու՜յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՜յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՜յ աման:

**Հանիկ նինար**

*Կրկնակ.*

Հանիկ նինար է, նինար,
Ջանիկ նինար է, նինար,
Ով չթռնա զիդա պար,
Ոտներ կոտրի քիսնա քար:
Ա՛խ, նինար, ջա՛ն, նինար,
Հանիկ նինար է, նինար,
Ջանիկ նինար է, նինար:

- Ախպեր, ախպեր, իմ նխշուն:
- Ի՞նչ իս բարձեր քու իշուն:
- Խունկ, հինա ու աբրշում:
- Վի՞ր կտանիս:
- Բզեզին:
- Բզեզ ետև սարերուն,
Բուրդ կզզե գիլերուն,
Թել կմանե հավքերուն,
Շոր կկարե ճժերուն:

Նուրին, նուրին էկեր է,
Շիլե շապիկ հագեր է:
- Նուրին, նուրին, ի՞նչ կուզիս:
- Կթան կովուց եղ կուզիմ,
Չալ հավուց հավկիթ կուզիմ,
Երկնքուց ամպեր կուզիմ,
Ամպերուց անձրև կուզիմ,
Որ մեր ուզած տա մեզի,
Անձրև իջնի վըր ձեզի:

**Զըմփիկ, զըմփիկ**

Զըմփիկ, զըմփիկ, զարին ա,
Իգդա շուշան դարին ա:

1. Մամեն գնաց բանջարի,

Նանեն գնաց բանջարի,
Բանջար չելավ, խոտ էլավ,
Խոտի տակին ծիտ էլավ,
Ծիտը թռավ գերանին,
Կանաչ խոտը բերանին:

Զըմփիկ, զըմփիկ, զարին ա,
Իգդա շուշան դարին ա:

2. Շուշան գնաց աղցանի,
Աղցան չեղավ, չորցել էր,
Անձրև չեկավ  էս տարի,
Չորցավ ցորեն ու գարի:

Զըմփիկ, զըմփիկ, զարին ա,
Իգդա շուշան դարին ա:

3. Գոռգոռոցն ընկավ վերև,
Լվաց կանաչ ու տերև,
Անձրև էկավ, գոլ էրավ,
Ցորեն հացը բոլ էրավ:

Զըմփիկ, զըմփիկ, զարին ա,
Իգդա շուշան դարին ա: